ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ԵՎ ՀԱՅ ԿԱՆԱՅՔ

ՓԱՇԻՆՅԱՆ Ռ. Հ.

Կիլիկիայի հարավում՝ Տավրոսի Ամանոս լեռնաշղթայի հարավարևմտյան փեշերին է Մուսա լեռը՝ Դամլաջըք գագաթով: Մուսա լեռան լանջերին սփռված էին հայկական վեց գյուղեր՝ Յողուն Օլուկ, Խդրբեկ, Վագըֆ, Հաջի Հաբիբլի, Բիթիաս, Քեբուսիե: Ենթադրություն կա, որ հայերը դեռ մինչև Տիգրան Երկրորդը հաստատվել են Ասորիքում, Անտիոքում ու Սելևկիայում[1]: Եվ այստեղ հաստատված հայկական բնակավայրերը պարկեշտ, աշխատասեր և ձեռներեց բնակիչներով, ինչպես նաև իրենց քաղաքական ազդեցությամբ մեծ կշիռ ունեին դեռ Տիգրան Մեծի օրոք: Հետագայում տարբեր տեղերից գաղթած և քաղաքական ինչ-ինչ հանգամանքներից մղված՝ հայերը եկել ու հաստատվել են Մուսա լեռան շուրջը՝ իրենց ենթարկելով ըմբոստ ժայռերն ու ապառաժները: Բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով՝ նրանք պահպանել են գրաբարով համեմված իրենց բարբառը: Այդ գյուղախմբի ավելի քան 6000 բնակիչներ զբաղվել են երկրագործությամբ, անասնապահությամբ, շերամապահությամբ, մեղվաբուծությամբ և տարբեր արհեստներով: Ամեն գյուղ ունեցել է իր դպրոցն ու եկեղեցին: Եվ ահա վրա է հասնում 1915-ի չարագույժ ապրիլը, երբ արդեն Արևմտյան Հայաստանը գալարվում էր արյան ու կրակի բոցերի մեջ:

Մուսա լեռան հայությունը նույնպես ենթարկվեց օսմանյան զորահավաքին՝ իբրև տուրք տալով իր ընտիր կտրիճներին թուրքական բանակին: Նրանք գնացին ծառայելու «վաթանին», որպեսզի իրենց ընտանիքները տարագրության արյունոտ ճանապարհ չանցնեն: Ծառայության վայրը հասնելու ճանապարհին թուրք արյունարբու զինվորները նրանց հազար ու մի չարչարանքների են ենթարկում: Վերջապես հասնում են Հալեպ: Նրանց զենք չեն տալիս: Հայ զինվորները հանդուրժում են բազում անարգանք ու չարչարանք՝ հանուն իրենց ընտանիքների և համագյուղացիների հանգըստության:

Հալեպում նրանք ականատես եղան հայ տարագիրների ահավոր տառապանքներին: Հազարավոր հայեր՝ ծեր, երիտասարդ, աղջիկ, կին, երեխա, ծայրագույն թշվառության հասած, հազիվ իրենց մերկությունը ծածկող ցնցոտիների մեջ, բերվում էին Հալեպ՝ Դեր Զորի անապատներ քշելու համար: Ամենուրեք լաց ու կոծ էր, ճիչ, աղաղակ, սարսափելի ձայներ: Ոմանք անկարող էին քայլել, ուժասպառ վայր էին ընկնում հենց փողոցներում, մայթերի վրա, ուրիշներն էլ գավազանի հարվածների տակ իրենց շունչն էին փչում: Մուսալեռցի զինվորների համար շատ դժվար էր ականատես լինել այդ զարհուրելի տեսարաններին: Նրանք համոզված էին, որ այդ նույնն

---

[1] *«Սուետիա» անունը հնում Սելևկիա մայրաքաղաք-նավահանգստի անունից է, որի ավերակները գտնվում են այդ վայրերում:*

է սպասվում ողջ հայությանը, հետևաբար հերթը շուտով մուսալեռցիներինն է: Նրանցից մի քանիսին հաջողվում է փախչել, վերադառնալ հայրենիք և մանրամասն պատմել իրենց տեսածի մասին[2]:

Այդ օրերին էլ Սուետիա է հասնում Զեյթունի բողոքական եկեղեցու քարոզիչ Տիգրան Անդրեասյանը, որը բնիկ Յողունօլուկցի էր և հազիվ էր փրկվել բռնագաղթից ու վերադարձել իր ծննդավայրը: Նա պատմում է Զեյթունի հայության դժոխային կացության մասին, ժողովրդին հորդորում է չընդունել բռնագաղթի դաժան հրամանը, ըմբոստանալ, միավորվել և բարձրանալ Մուսա լեռան գագաթը, զենքի դիմել, մեռնել փառքով ու պատվով[3]:

Քեսապն ու արվարձանները 1915 թ. հուլիսի 28-ին ստացան տարագրության պաշտոնական հրահանգ[4]: Կասկած չկար, որ շուտով մուսալեռցիներն էլ կստանան: Պետք էր վճռական միջոցների դիմել: Հուլիսի 29-ին Յողուն Օլուկ գյուղի քահանա Աբրահամ Տեր-Գալուստյանի տանը տեղի է ունենում 6 գյուղերի ներկայացուցիչների ժողով, որտեղ որոշվում է լեռ բարձրանալ և դիմել զինված ինքնապաշտպանության՝ հույսը դնելով իրենց հին և մասամբ էլ նոր զենքերի վրա[5]: Հուլիսի 30-ին ստացվում է մուսալեռցիների տեղահանության մասին Անտիոքի գայմագամի հրամանը. մինչև 7 օրվա ժամկետ էր տրվում՝ տուն ու տեղ թողնելու և կառավարության նշած վայր մեկնելու համար[6]:

Մինչ այդ՝ օգոստոսի 3-ին, ժողովուրդն արդեն սկսել էր լեռ բարձրանալ: Դա տառապալից վերելք էր: Կանայք, երեխաները, մեծահասակները, իրենց կարողություններից ավելի բեռնավորված, բարձրանում էին լեռն ի վեր: Մարդիկ տանում էին նաև ընտանի կենդանիների: Վերապրելու բնազդը ուժ էր տալիս նրանց: Առաջին հերթին լեռ են բարձրանում Յողուն Օլուկի, Խդրբեկի և Վագըֆի գրեթե ամբողջ բնակչությունը և Քեբուսիեի 17 ընտանիքները: Մինչդեռ բիթիասցիների և հաջիհաբիբլիցիների մեծ մասը մնացել էր գյուղերում[7]: Արդեն օգոստոսի 2-ին ավելի քան 4 հազար մարդ Մուսա լեռան վրա փայտացախերից ու լեռնաքարերից պատրաստում էին իրենց հոլիկները՝ անձրևից ու խոնավությունից պաշտպանվելու համար: Ավելի ուշ սկսում են զբաղվել նաև զորանոցների շինությամբ:

Թուրք մյուդիր Խալիտը մուսալեռցիներին արդեն երրորդ գրությունն է ուղարկում, պահանջում է իջնել լեռան բարձունքից՝ խոստանալով, որ կառավարությունը կների նրանց անխոհեմ քայլը:

---

[2] **Պուրսալեան Ց. Գ.,** *Սուետիոյ հերոսամարտը (Հայրենիք, Բոստոն, 1929, N 9, էջ 115):*

[3] *Վեր.* **Անդրէասեան Տ.,** *Զէյթունի տարագրութիւնը և Սուէտիոյ ապստամբութիւնը, Հալէպ, 1935, էջ 38:*

[4] *Յուշամատեան Մուսա լեռան, Բեյրութ, 1970, էջ 324:*

[5] *Նույն տեղում, էջ 324:*

[6] *Նույն տեղում, էջ 326:*

[7] **Պուրսալեան Ց. Գ.,** *Մուսա լեռան հերոսամարտը, Այնճար (Լիբանան), 2004, էջ 39:*

Հաջորդ գրության մեջ նա արդեն սպառնում էր զորք բերել և կռիվ սկսել[8]:

Սկզբում մուսալեռցիները տեղավորվում են 3 տարբեր շրջաններում. Գըզըլ Չայ, Գուզ Ճըղազ և Տամլաճըգ: Ընտրում են զինվորական և ներքին գործերը կառավարող մարմիններ: Դեռ նոր էին խրամատները պատրաստել, պահակներ նշանակել ու իրենց պաշտոնի գլուխն անցել, երբ օգոստոսի 7-ին ընդհանուր ժողով հրավիրելու անհրաժեշտություն եղավ[9]: Ժողովը հրավիրվեց Թաթար-Ալանկ կոչվող դաշտի մեջ, որին մասնակցում էին 3 շրջանների ներկայացուցիչներն ու զինվորական մարմնի կառավարիչները, նաև Բիթիասի և Հաջի Հաբիբլիի ներկայացուցիչները: Ժողովը նոր էր սկսել իր աշխատանքները, երբ հանկարծ լուր եկավ, որ մյուդիր Խալիտի առաջնորդությամբ Եոլ Աղըզրյի կողմից կռիվն սկսված է. թուրք զինվորները առաջ են շարժվում: Բոլոր երիտասարդներն ու զենք վերցնելու կարողություն ունեցողները շարժվում են դեպի կռվի վայրը: Երիտասարդները երգելով էին առաջ շարժվում: Դա Մուսա լեռան ինքնապաշտպանության առաջին կռիվն էր, առաջին մարտը թուրքական զորքի դեմ: Հոգեբանական բարդ իրավիճակ էր հայ մարդու համար: Դարերով թուրքական իշխանության լծի տակ ապրող հայը զենք էր բարձրացրել զորքի դեմ. դա խիզախություն պահանջող քայլ էր: Թշնամին հարձակվում էր, կյանքի ու մահվան հարց էր: Հայերն ուզում էին կոտորել բոլորին, որ ապացուցեն, որ «ռայա» համարված հայն էլ գիտե կռվել: Զարհուրելի կրակ էր թափվում երկուստեք: Թշնամին իզուր տեղը ռազմամթերք էր փըչացնում: Ոչ մի գնդակ իր նպատակին չէր հասնում: Թշնամին ջանք էր թափում աջ թևից շրջապատել հայ կռվողներին, սակայն ամեն մի հանդգնություն թանկ էր նստում նրանց վրա: Կռիվը շարունակվում էր արևի կիզիչ ճառագայթների տակ: Արևը այրում էր նրանց ճակատները՝ հետզհետե ավելի զգալի դարձնելով ծարավը, որը թմրեցնում էր կռվողների ջղերն ու թուլացնում բազուկները:

Այդ կռվի մեջ հերարձակ մի կին դիրքից դիրք էր անցնում, ջուր բաժանում մարտիկներին: Կռվող հայ տղամարդիկ խնդրում էին նրան զգուշանալ սլացող բյուրավոր գնդակներից և թաքնվել քարի հետևում, բայց կինը հանդիմանական շեշտով ասում էր. «Զարկեք, եղբայրներ, երբեք մի վախնաք, այդ վատերուն գնդակը հայը չի կրնար սպանել: Զարկեք անխնայ, թող օրհնեալ ըլլան ձեր բազուկներն ու զենքերը: Զարկեք...»[10]: Թուրքի գնդակից չվախեցող այս հայուհին Յողուն Օլուկ գյուղից Ծաղեր Տեր-Մովսեսյանն էր: Շուտով մյուս վայրերից էլ օգնության եկան: Կռիվը տևեց 6 ժամ: Դա առաջին մարտական մկրտությունն էր, որն ավարտվեց հայերի կատարյալ հաղթանակով: Մութն էր, երբ թշնամին խուճապահար նահանջեց՝ տանելով բազմաթիվ դիակներ և ավելի վիրավորներ:

---

[8] *Յուշամատեան Մուսա լեռան, էջ 328:*

[9] *Վեր.* **Անդրէասեան Տ.**, *Զէյթունի տարագրութիւնը և Սուէտիոյ ապստամբութիւնը, Հալէպ, 1935, էջ 57:*

[10] **Պուրսալեան Յ. Գ.**, *Սուեդիոյ հերոսամարտը, էջ 42:*

Մուսալեռցիները կորուստ և վիրավոր չունեցան: Կռվում տարած հաղթանակը խրախուսեց նրանց: Թշնամին շտապում էր օր առաջ ոչնչացնել ապստամբներին: Մյուդիր Խալիտը այլևս էժան հաղթանակի և փառքի մասին չէր մտածում. նրա միակ մտահոգությունը շարժումը սաղմի մեջ խեղդելն էր:

Երկրորդ հարձակումն սկսվեց օգոստոսի 10-ի վաղ առավոտյան Հաջի Հաբիբլի գյուղի կողմից: Կռվին մասնակցում էր 5.000 զինվոր՝ երկու լեռնային թնդանոթների և հրետանու ուղեկցությամբ[11]: Ռումբերի տարափ էր դիրքերի վրա, որն իր նպատակին էր ծառայում: Սկզբում մուսալեռցիները չէին պատասխանում, սպասում էին, որ թշնամին մոտենա, որ ամեն մի գնդակը մեկ թուրք զինվորի կյանք արժենա: Երկուստեք բացվեց դժոխային կրակ: Հայ մարտիկների արձակած անվրեպ գնդակներից թշնամին մեծ կորուստներ ունեցավ: Ռումբերի ավերումներին չդիմանալով՝ հայ մարտիկներն սկսեցին հետ քաշվել՝ ավելի հարմար դիրքեր գրավելու համար: Եղանակը աստիճանաբար փոխվեց, սկսեց հորդառատ անձրև տեղալ, որը մեծ չափով դժվարացրեց հայ կռվողների վիճակը մեծ մասամբ անգործածելի դարձան հասարակ որսորդական հրացանները: Բայց մուսալեռցիներն ունեին նաև հունական կրա-հրացաններ և գունտագլը մաուզերներ, որոնցով կարող էին կրակ թափել թշնամու գլխին: Հայ զինագործ վարպետները չպայթող ռումբերն օգտագործում էին թշնամու դեմ:

Որոշ ժամանակ երկկողմ լռությունից հետո կռիվը նորից բորբոքվեց: Անձրևը շարունակում էր տեղալ՝ է՛լ ավելի դժվարացնելով մուսալեռցիների վիճակը: Օգտվելով աննպաստ պայմաններից՝ թրշնամին առաջ էր շարժվում՝ հասնելով «Օմարի գետին» կոչված վայրին: Հայ կռվողները մահասփյուռ գնդակներով կասեցնում էին թշնամու առաջխաղացումը: Թշնամին, նոր օգնական ուժեր ստանալով, բուռն հարձակման անցնելով, կարողացավ հասնել մինչև Թաթար-Ալանկ: Մյուս կողմից էլ վտանգավոր վիճակ ստեղծվեց մուսալեռցիների Գըզըլ-Չայ բանակատեղում: Ուժեղացնելով թնդանոթային կրակը՝ ռումբերն ընկնում էին հյուղակների մոտ՝ ավերելով մի քանիսը: Ժողովրդի մի մասը, թողնելով Գըզըլ-Չայի բանակատեղը, փոխադրվեց Գուզ-Ճըղազ, իսկ մեծամասնությունը փոխադրվեց Տամլաճըգ, որը դարձավ ամենամեծ կենտրոնատեղին: Մուսալեռցիները գերմարդկային ճիգով շարունակում էին դիմադրություն ցույց տալ: Այս կռվի ժամանակ բացառիկ քաջություն ցուցաբերեց և ծանր վիրավորվեց Հակոբ Ղարագյոզյանը, որին ժողովուրդը խիզախության համար «առյուծ» - «Ըլլեոն» անունը տվեց: Նա ոչ միայն քաջ կռվող էր, այլ նաև հսկայական աշխատանք կատարեց ինքնապաշտպանության գործի կազմակերպման համար. նա էր, որ առաջ քաշեց ինքնապաշտպանության գաղափարը: Ծանր վիրավոր վիճակում անգամ Հ. Ղարագյոզյանը դուրս չէր գալիս մարտադաշտից: Նրա արձակած գնդակներից գետնին էին տապալվում թուրք ասկյարները: Երբ ընկերները նրան դուրս էին հանում

[11] Յուշամատեան Մուսա լեռան, էջ 332:

կռվից, խնդրում էր իրենով չզբաղվել, այլ գնալ և շարունակել կռիվը: «Կաղաչեմ ինձմով մի զբաղիք... դուք գացեք և թշնամիին դիմադրեցեք: Մանավանդ մի տարակուսիք վերջնական հաղթանակի վրա: Մերը պիտի ըլլա ան»[12]:

Հակոբ Ղարագյոզյանը եղավ Մուսա լեռան հերոսամարտի առաջին նահատակը: «Օմարի գետին» ճակատամարտում մեծ հերոսություն հանդես բերեց նաև Յողունօլուկցի քաջամարտիկ Պետրոս Գալստյանը, որն իր դիրքից հաջորդական 5 գնդակներով իրար հետևից գետնին տապալեց 4 թնդանոթաձիգների: Ի վերջո, թշնամին սարսափահար լքեց թնդանոթը և փախուստի դիմեց: Թուրք հազարապետը, տեսնելով թնդանոթաձիգների ընկնելը, վախեցած նահանջի հրաման է տալիս. «Ասոնց հաղթել անկարելի է, գերանի մը ծայրը դրված ասեղ մը անվրեպ կրնան հարվածել, հերիք է, որ տեսնեն զայն»[13]: Այս կռվի ժամանակ մի խումբ պիթիասցիներ, որոնք դեռ չէին հասցրել տեղավորվել, ճանապարհի վրա զոհվեցին կամ գերի ընկան:

Մարտը շարունակվեց մինչև իրիկուն: Հայ կռվողներն ուժգին հարձակումով գրոհեցին թշնամու վրա և, խուճապի մատնելով նրան, նորից հետ քշեցին մինչև «Օմարի գետինը»: Երկրորդ ճակատամարտը տևեց 12 ժամ: Հակառակ աննպաստ, անձրևային եղանակին՝ լավ հանդերձավորված ու զինված թշնամին չկարողացավ ընկճել մուսալեռցիներին: Այս կռվում թշնամին տվեց 100-ից ավելի սպանված և մի քանի անգամ ավելի վիրավոր: Մուսալեռցիներն ունեցան 4 սպանված և երկու վիրավոր[14]: Հայերն անհամբեր լուսաբացին էին սպասում, որ հարձակման անցնեն: Թշնամին, օգտվելով թանձր մառախուղից, կարողացավ փախուստի դիմել:

Ժողովուրդը հրճվանքի մեջ էր: Հաղթանակը կատարյալ էր: Օգոստոսի 11-ին՝ հաղթանակի հաջորդ օրը, եղանակը փոխվեց. պայծառ օր էր: Կանայք շտապեցին թրջված անկողիններն ու շորերը չորացնել: Միաժամանակ աշխատում էին ավարտին հասցնել տնակների կառուցման աշխատանքները, որոնք անավարտ էին մնացել կը-ռիվների պատճառով, ինչպես նաև ուտելիք պատրաստել կռվողների համար:

Ճիշտ է, երկրորդ ճակատամարտն էլ ավարտվեց մուսալեռցիների հաղթանակով, սակայն կռիվների ընթացքում բացահայտվեցին շատ թերություններ: Ամենից առաջ ռազմական ուժերը ցրված էին մի քանի տեղերի վրա. դժվար էր փոքրաթիվ ուժերով այն կառավարել: Հարկավոր էր ուժերը կենտրոնացնել մի տեղում: Գըզըլ-Չայի բանակատեղը հենց կռվի ընթացքում դատարկվեց, Գազ Ճըղազի բարձր դիրքը ենթակա էր ռմբակոծման վտանգի: Ժողովրդի մեծամասնությունը հենց կռվի ընթացքում հավաքվեց Տամլաճըգի մեջ, որը ցածր էր և բլուրներով շրջապատված: Պիթիասցիներն էլ հաստատվել էին «Գափլան տուզաղը» կոչված վայրում, որը Տամլաճըգի

---

[12] *Նույն տեղում:*

[13] *Նույն տեղում:*

[14] **Պուրսալեան Ց. Գ.,** *Սուետիոյ հերոսամարտը, էջ 46:*

և Գազ Ճըղազի միջև էր: Այս երեք կենտրոնների տեղական ժողովները միավորվելով ստեղծեցին նոր կենտրոնական վարչական ժողով և նոր Զինվորական կենտրոնական վարչություն: Կենտրոնական վարչական ժողովի ատենապետը պատվելի Տիգրան Անդրեասյանն էր, Զինվորական ընդհանուր վերահսկիչը՝ 22-ամյա Մովսես Տեր-Գալստյանը (Ա. Լեյլանի): Կենտրոնական վարչական ժողովն ամեն օր հավաքվում էր: Այն զբաղվում էր դատավարություններով, խիստ պատժում իրենց պարտականությունների մեջ թերացողներին:

Զինվորական կազմակերպությունը բաղկացած էր 44 մարտական խմբերից, որոնց կեսը պահեստի զորանոցներում էին, իսկ մյուս մասը՝ դիրքերում: Յուրաքանչյուր խումբ ուներ իր տասնապետը: Դիրքերի առավելությունները հաշվի առնելով՝ որոշում են ժողովրդին հավաքել Տամլաճրգի մեջ: Գազ Ճըղազը ավելի անառիկ էր, սակայն Տամլաճրգը ավելի մեծ առավելություն ուներ. ծովը դիմացն էր: Ծովը ներշնչում էր փրկության հույս: Որտեղ էլ որ բնակվեին մարտիկները, իրենց պարտականությունները կատարում էին Տամլաճրգի կենտրոնական զորանոցում:

Հայերի իշխանության տակ 115 կմ^2 տարածք էր, որը հսկողության տակ պահելը մեծ դժվարություն էր: Որոշվեց ստեղծել 3 արագաշարժ կամավորների խումբ՝ 33 հոգուց բաղկացած, յուրաքանչյուրում՝ 11 հոգի, անհրաժեշտության դեպքում խմբերը բաժանվում էին այնքան մասերի, որքան անհրաժեշտ էր կռվում շտապ օգնության հասնելու համար: Այդ խմբերում ընդգրկված էին ամենաքաջերն ու հանդուգնները: Կամավորների կենտրոնական վայրը Թաթար-Ալանկն էր, որը մոտ էր բոլոր դիրքերին: Կար պատանի սուրհանդակների խումբ՝«թելեֆոնի տղաք» անունով, որոնք 10-12 տարեկան տղաներ էին և գնդակների տարափի տակ ապահովում էին կապը: «Կիները, առանց կազմակերպության մեջ մտնելու՝ կը ծառայեին ջուր և պաշար հասցնելով խրամատները: …Տունը ջուր բերել իրենց պարտականությունը եղած էր միշտ: Եվ հիմա ջուրերու ակերը խիստ հեռի էին բնակարաններեն: Երբեմն … մեկ ու կես ժամեն ոչ պակաս ժամանակ պետք էր ակեն ջուր առնելու և վերադառնալու համար:

Բնական է, որ լերան վրա ջրաղաց ալ չկար, ուստի կիներուն բաժին էր հացահատիկը հատիկ հատիկ խոշոր ալյուրի վերածել երկնաքարերու միջոցով, և ապա հաց շինել»[15]:

Երկրորդ ճակատամարտից հետո հարաբերական հանգստություն էր տիրում. օգոստոսի կեսերին Ռամազան բայրամի օրեր էին, և թշնամին նոր հարձակում չձեռնարկեց (իհարկե, տեղական ընդհարումներն անպակաս էին): Առայժմ մուսալեռցիները սննդամթերքի պակաս չունեին, չնայած Կենտրոնական վարչական մարմինը նախատեսել էր ծայրահեղ դեպքում հաշվի առնել ժողովրդի մոտ եղած սննդամթերքը, անասունները և յուրաքանչյուրի համար հավասար սննդաչափ որոշել, սակայն դրա անհրաժեշտությունը չեղավ: Ա-

[15] *Վեր.* **Անդրէասեան Տ.,** *Զէյթունի տարագրութիւնը և Սուէտիոյ ապստամբութիւնը, էջ 73:*

մառվա ամիսներին հնարավոր էր լինում սննդամթերք ձեռք բերել: Խմբեր էին կազմում, որոնց մեջ մեծ թվով կանայք՝ պարկերով, զինյալ պահակների ուղեկցությամբ, մտնում էին մոտակա գյուղերի այգիներն ու պարտեզները, քաղում էին զանազան պտուղներ (թուզ, սալոր, ձիթապտուղ, խաղող և այլն), բարձրանում լեռ, դաշտերից էլ հավաքում էին ցորեն, գարի, եգիպտացորեն, ոսպ, սիսեռ և այլն: Լինում էին բախումներ թուրքական կայազորի հետ: Այս ձևով ժողովուրդն ունենում էր թարմ մրգեր, իսկ ցորենն ու գարին կանայք չորացնում էին և երկանքներով աղում, վերածում հացի:

Թշնամին չէր հաշտվում մի բուռ ապստամբներից պարտություն կրելու փաստի հետ, անընդհատ մտածում էր նրանց ոչնչացնելու մասին: Մուսալեռցիները հասկանում էին, որ երկար ժամանակ չեն կարող կռվել թուրքական կանոնավոր բանակի դեմ: Աստիճանաբար պակասում էին ռազմամթերքն ու ուտելիքը: Նրանք հույս ունեին, որ դաշնակից պետությունները կօգնեն, որ ծովից մարտանավ կերևա և օգնության կհասնի իրենց: Հակառակ դեպքում ելքը փառավոր մահն էր լինելու: Ուշադրություն գրավելու համար նրանք լեռան ծովահայաց եզրին բարձրացրին երկու մեծ սպիտակ դրոշակներ: Մեկի վրա հայ կանայք կարմիր կտորից կարեցին կարմիր խաչի նշանը, մյուսի վրա անգլերեն տառերով ասեղնագործեցին. «Քրիստոնյաները վտանգի մեջ են»[16]: Դրանց շուրջ անընդհատ վառվում էին խարույկներ՝ անցնող նավերի ուշադրությունը գրավելու համար: Երկու դրոշակների մոտ սահմանված էր մշտական հերթապահություն: Մարտանավ տեսնելուն պես պահակները պետք է շարժեին դրոշակները: Մուսալեռցիները իրենց ծանր վիճակի մասին պատրաստել էին նաև դիմում-աղերսագիր՝ ուղղված դաշնակից պետություններին (Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Ամերիկա, Ռուսաստան), որ նավ երևալու դեպքում պետք է նրանց հասցներ փորձված լողորդ Մովսես Գրրրգյանը[17]:

Դիմում-աղերսագիրը դրված էր թիթեղյա ամանի մեջ՝ բերանն անագով ամրացված: Աղերսագրում, որ անգլերեն գրել էր պատվ. Տ. Անդրեասյանը, ասված էր. «... Մենք, Եօղուն – Օլուգի և ուրիշ հինգ գյուղերու բնակչությունը՝... մոտավորապես 6.000 հոգի քաշված ենք Ճեպել – Մուսայի Տամլաճրգ կոչված կենտրոնը...: Մենք հոս ապաստանած ենք, թրքական բարբարոսությունեն, ... կոտորածեն և մահեն զերծ մնալու համար: ... Վստահ ենք, որ դուք ծանոթ եք թուրքին ներկա բնաջնջման քաղաքականության, զոր ան կըգործադրե... մեր ցեղին վրա: Հայերը ցրելու պատրվակով, իբր թե արգելելու համար անոնց ապստամբությունը... հայ քրիստոնյաները կվտարվեն իրենց տուներեն, կը տարագրվեն իրենց օջախներեն... ու կղրկվեն ... անծանոթ, անապատ վայրեր»:

Ապա նկարագրելով ճանապարհին հայերի ոչնչացումն ու ողբերգական վիճակը՝ խնդրում են. «... ազատեք մեր կյանքն ու պատիվը: Հաճեցեք, ...փոխադրել մեզ Կիպրոս կամ ուրիշ ազատ երկիր մը:

---

[16] *Յուշամատեան Մուսա լեռան, էջ 344:*

[17] *Նույն տեղում, էջ 345:*

Մեր ժողովուրդը ծույլ չէ, կրնայ իր ապրուստը ճարել, եթե գործ տրվի իրեն: Եվ կամ, եթե այսքանը կարելի չէ, հաճեցեք փոխադրել գոնե մեր կիները, ծերերն ու մանուկները, և մեզի տվեք ուտելիք, զենք և ռազմամթերք, որպեսզի Ձեզի հետ, ձեր կողքին, կռվինք թրքական ույժերուն դեմ. ...Կը խնդրենք, Տեր, մի թողուք, որ ոչնչանանք: Ազատեցեք մեր կյանքը, ազատեցեք մեր պատիվը, քանի դեռ ուշ չէ:

Ձերդ անկեղծորեն
Ի դիմաց բոլոր քրիստոնյաներուն
Տիգրան Անդրեասյան
Ճեպել-մուսա /10/ 20 օգոստոս 1915»[18]:

Օգոստոսի 15-ին՝ կիրակի առավոտյան, զորանոցից հեռու գտնվող ծառազարդ բլրակի վրա պատարագ է մատուցվում: Ժողովուրդը լուռ աղոթում էր: Հանկարծ մունետիկները կռվի ահազանգ հընչեցրին: Ժողովուրդն արագ դիմեց հայրենի լեռան վտանգված դիրքերը՝ հարձակվող թշնամուն հակահարված տալու համար: Տղամարդկանց հետ կանայք էլ, հրացաններն ուսերին, խմբովի վազեցին դիրքերը՝ կռվելու: Մի քանի կանայք էլ, թիթեղներն ու կուժերն առած, շտապեցին ջուր հասցնելու կռվողներին[19]: Թշնամին 5.000 զորքով ու մի այդքան էլ թալանի տենչով բռնված խուժանով առաջ էր շարժվում: Թուրքական բանակի հրամանատարն էր Ֆահրի փաշան: Թշնամու ուժերը բաժանված էին վաշտերի, որոնք հարձակվում էին մի քանի տեղերից: Անդադար լսվող թնդանոթների որոտին, շեփորների կանչին, հրացանների պայթյուններին հայ կռվողները չէին պատասխանում: Նրանք ուզում էին, որ թշնամին շատ մոտենա, որպեսզի արձակված գնդակները նպատակին ծառայեին: Մանավանդ խնայողությամբ էր պետք գործածել փամփուշտները: Մուսա լեռան փեշերին դժոխային կրակ տեղալով՝ թշնամին կամաց-կամաց առաջ էր շարժվում դեպի առաջապահների դիրքերը: Մի փոքրը առաջանալուց հետո թշնամին բաժանվեց երկու մասի՝ երկու տարբեր ճակատների վրա հարձակվելու համար:

Առաջին ու մեծ զորախումբը իր արշավանքն ուղղեց դեպի Թաթար-Ալանկ՝ Մուսա լեռան սիրտը: Տագնապ հայտարարվեց: Ոտքի կանգնեցին բոլորը՝ տղամարդիկ, կանայք, ծերերը, պատանիները: Նրանք մտան կռվի այդ հսկա խառնարանի մեջ՝ կենաց ու մահու պայքար մղելու համար: Պետրոս Սրգայանի ընտանիքի բոլոր անդամները կռվի մեջ էին: Այստեղ էին Պետրոսը, կինը, տղաները՝ Կարապետը, Եսային, Փանոսը, Միսակը և աղջիկը: Պետրոսը, ձեռքն առնելով թշնամու արձակած, բայց չպայթած ռումբը, թշնամու կողմը նայելով, հեգնանքով բղավում էր. «Նայեցեք ձեր ռումբերուն հետ կը խաղանք իբրև սովորական գնդակներ»[20]: Տագնապալի այդ րոպեներին կռվողների մեջ էին Վարդեր Զեյթլյանը, Ծաղեր Տեր-Մովսեսյանը, Շուշան Գապայանն իր ամուսնու՝ Պողոս Գապայանի

[18] *Նույն տեղում, էջ 348:*
[19] *Նույն տեղում, էջ 350:*
[20] *Նույն տեղում, էջ 381:*

հետ, Մանուշակ Մանուկյանը (Եաղուբյան), Եղիսաբեթ Սըգայանը[21]: Շուշանն անձնվեր ու անվեհեր մի կին էր, մահվանը նայում էր ամենայն հանդարտությամբ և սառնասրտությամբ: Նա համոզված էր, որ իրենց զենքերին և անառիկ լեռներին ապավինելով՝ ի վերջո կկարողանան հաղթական դուրս գալ կենաց ու մահու այդ արյունալի պայքարից: Նա միշտ ամուսնու կողքին էր: Կռվի վտանգավոր պահին Վարդեր Զեյթլյանը, սափորը ուսին, եղնիկի արագաշարժությամբ, դիրքից դիրք վազելով, ջուր էր բաժանում կռվողներին: Հանկարծ գնդակը ծակում է ջրամանը: Հերոսուհին, զայրույթից կրակ ու բոց կտրած, հանդիպակաց պուրակների մեջ վխտացող զինվորներին դառնալով, բղավում է. «Հե՜յ, նամերտնե՛ր, ձեր գնդակը կրնայ կուժս ծակել, սիրտս չի կրնար...»[22]:

Թնդանոթները կրկին ու կրկին ռմբակոծում էին բարձունքը, իսկ հայերը կատակներ էին անում և ռազմաշունչ երգեր երգում: Մուսալեռցիները սկզբում կարծում էին, որ թշնամին Գըզըլճայի և Սավգուլ-Օլուգի, ինչպես նաև Տամլաճըգի մեծ ջրի կողմից չի հարձակվի, որովհետև այդտեղ դիրքերն անառիկ էին՝ շրջապատված սարերով: Ժողովրդին անջուր թողնելու միտումով թուրքերը մեծ ուժերով փորձեցին գրավել Սավգուլ-Օլուգի ջրի ակը, սակայն ուժեղ դիմադրության հանդիպեցին: Տամլաճըգի և մեծ ջրի ուղղությամբ հարձակվողներն էլ նույն բախտին արժանացան: Բացառիկ հերոսություն ցուցաբերեցին կանայք, աղջիկները, որոնց օգնում էին պատանիները: Նրանք Մանուշակ Մանուկյանի առաջնորդությամբ ժայռի բեկորներ, մեծ-մեծ քարեր էին գլորում մագլցել ձգտող թըշնամու գլխին՝ թույլ չտալով, որ մոտենան գլխավոր բանակատեղին: Նրանք ստիպում էին թշնամուն նահանջել[23]:

Թշնամին կատաղությամբ շարունակում էր հարձակումը Թաթար-Ալանկի ուղղությամբ: Մյուս ճակատներում հայ կռվողները դիմադրում էին և թույլ չէին տալիս թշնամուն մի քայլ անգամ առաջ գալու: Թնդանոթի ռումբեր ու անհաշիվ գնդակներ տեղալով՝ թուրքերին հաջողվում է գրավել հայերից մի քանի դիրքեր: Չնայած հերոսական դիմադրությանը՝ թշնամին առաջ էր շարժվում, մոտենում էր վերջին դիրքին՝ Մահվան բլուրին, գնդակների տարափ թափելով մուսալեռցիների զորանոցի և բնակավայրի վրա: Նրանք 15-20 վայրկյանի հեռավորության վրա էին զորանոցից: Հայ կռվողներն անխորտակելի կամքով ծառացան թշնամու դեմ:

Այդ բարձունքի սեպ ժայռերի կատարներից մի քանի հերոսուհիներ խրոխտ ու առնական ձայնով բղավեցին. «Եղբայրնե՛ր, վրիժառու քաջե՛ր, գնդակ մը ևս և վերջինը կըլլա այդ: Որովհետև թշնամին սկսած է խուճապի մատնվել: Զարկե՛ք, մի՛ մեղքնաք, գնդակ մը ևս, և վերջինը...»: Հայ կռվողները կատաղած առյուծների նման խոյացան թշնամու վրա՝ ամեն կողմից մահ սփռելով նրա վրա...[24]: Ուրախ աղաղակներ, և թշնամին խուճապի մատնվեց՝ բռնելով փա-

---

[21] *Նույն տեղում, էջ 341:*

[22] **Պուրսալեան Յ. Գ.,** *Սուետիոյ հերոսամարտը, էջ 69:*

[23] *Նույն տեղում, էջ 63:*

[24] *Նույն տեղում, էջ 68:*

խուստի ճամփան: Հաղթությունը կատարյալ էր: Մահվան բլուրն ազատագրված էր: Այսպես ավարտվեց երրորդ մեծ կռիվը: Այստեղ թշնամին տվեց 800 սպանված և ավելի քան վիրավորներ:

Մուսալեռցիներն ունեցան 14 սպանված և 6 վիրավոր[25]:

Երրորդ կռվից հետո թշնամին համոզված էր, որ սննդի և ռազմամթերքի սակավությունը կստիպի մուսալեռցիներին անձնատուր լինել: Հայերը հույսները չէին կտրել ծովից եկող օգնությունից:

Մուսալեռցիները դաշնակիցների հետ կապվելու շատ փորձեր կատարեցին: Օգոստոսի 12-ին Մովսես Գըրրգյանին օգնականներ տալով՝ աղերսագրի երկրորդ օրինակը ուղարկեցին Հալեպ և Իսկենդերունի շրջանը այն հույսով, որ մարտանավի կհանդիպեն և աղերսագիրը կհանձնեն: Այդ խումբը մի քանի օր մնալուց հետո ապարդյուն վերադարձավ:

Սեպտեմբերի 2-ին ծովի վրա մարտանավ է երևում. ժողովուրդը հավաքվում է Տամլաճըգի բլուրի վրա: Թափահարում են սպիտակ դրոշները, խարույկներ վառում, բայց նավը անտարբեր հեռանում է: Սեպտեմբերի 5-ին առավոտյան ծովի վրա մարտանավ երևաց, որն սկսեց մոտենալ ափին: Մարտանավը, նկատելով նրանց, խարիսխ գցեց, մակույկ ուղարկեց, ծովափին գտնվող պահակներին վերցնելով՝ նավ տարավ՝ հանգամանորեն տեղեկանալու ամբողջ եղելությանը: Դա ֆրանսիական «Գիշեն» մարտանավն էր: Հերոսամարտի 41-րդ օրը՝ 1915 թ. սեպտեմբերի 13-ին, ֆրանսիական 5 մարտանավեր 4058 մարդ[26] վերցրին և ուղղվեցին Պորտ Սայիդ:

Մուսա լեռան ինքնապաշտպանությունը հայ ժողովրդի ազատագրական պայքարի փառավոր էջերից է, որն ավարտվեց հաջողությամբ: Այս պայքարում հավատարիմ լինելով հայ կնոջ հերոսական ավանդույթներին՝ լեռան բարձունքներում մուսալեռցի կանանց մի մասը, զենքը ձեռքներին, ամուսինների, եղբայրների, զավակների կողքին մարտնչում էր թշնամու դեմ, մյուսներն իրենց ուսերով կռվողներին ուտելիք, զինամթերք, ջուր էին հասցնում. կանայք, որպես գթության քույր, խնամում էին վիրավորներին, բուժում նրանց վերքերը, նաև կտրտում էին ծառերը, խրամատներ շինում: Նրանք ոգեշնչում, գոտեպնդում էին կռվողներին, մղում հերոսության:

Երկրորդ աշխարհամարտից հետո՝ 1946-1947 թթ., մուսալեռցիներից 700 ընտանիք (70 տոկոսը) հայրենադարձվեց, հաստատվեց Էջմիածնում, Հոկտեմբերյանում: Մուսալեռցիների հերոսական պայքարին է նվիրված ավստրիացի մեծ գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» գիրքը, որը թարգմանվել է աշխարհի բազմաթիվ լեզուներով:

Երևանից Էջմիածին տանող ճանապարհին է խոյանում Մուսա լեռան հերոսամարտին նվիրված հուշարձան կոթողը, որտեղ ամեն տարի՝ սեպտեմբերի վերջին կիրակի օրը, աշխարհի տարբեր ծագե-

---

[25] **Սահակյան Ռ. Գ.,** *Յեղասպանության պատմությունից, Ե., 1990, էջ 181:*

[26] **Սահակյան Ռ. Օ.,** *Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Ե., 2005, էջ 323:*

րից հավաքվում են մուսալեռցիների ժառանգները. նրանք ավանդական հարիսա են եփում և ուրախությամբ, երգ ու պարով, թրմբուկ-շեփորի հնչյուններով նշում են հերոսամարտի օրը, հարգում զոհված հերոսների հիշատակը, հաստատում իրենց ինքնությունը հայրենի հողի վրա:

ГЕРОИЧЕСКАЯ САМООБОРОНА МУСАЛЕРА И АРМЯНСКИЕ ЖЕНЩИНЫ

ПАШИНЯН Р. А.

Резюме

30-ого июля 1915 г. каймакам Антиоха отдал приказ о депортации мусалерцев, согласно которому жители Мусалера в течение 7 дней обязаны были покинуть деревню. Более 6.000 тысяч человек приняли решение подняться на вершину Мусалера и подготовиться к вооруженному сопротивлению. Среди них были также женщины и дети. Наравне с мужчинами женщины с оружием в руках героически сражались с турецкими солдатами. Своей смелостью и отвагой особенно отличились Вардер Зейтлян, Цагер Тер-Мовсесян, Шушан Гапаян, Манушак Манукян (Ягубян), Егсапет Сагиян и другие.